



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


**24 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1303 - Ա
քաղ. երևան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-968-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԵԾՆ ՆԵՐՍԵՍ», ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2014 թվականի դեկտեմբերի 20-ի համաձայնեցման թերթը, ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել, որ Միացյալ հայկական հիմնադրամի ֆինանսավորմամբ «TOMS» ընկերության կողմից «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված կոշիկները (2 բեռնարկ, 60510 զույգ, 25,708 կգ ընդհանուր քաշով, 296,499 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 10,115 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն, բեռի բաշխման նախնական ցանկերը կցվում են) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2015-2018 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-968-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար-ընդհանուր, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար-ընդհանուր, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար-ընդհանուր, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Երզրակի, Լոռու, Սյունիքի, Տավուշի և Վայոց ձորի մարզպետներին:



ՆԱԽԱԳԵՐ



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Միացյալ Հայկական հիմնադրամի կողմից «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված երկու բեռնարկով մարդասիրական օգնության ECMU4444361, CMAU1471139, 25708կգ, ընդհանուր կշռով, 60510 զույգ, 296,499 դոլար արժողությամբ, 10115 դոլար փոխադրարժույթով ամառային կոշիկների, բաշխման ցանկ:

N	Կազմակերպության անվանում	Քանակ Զույգ	Գին ԱՄՆ դոլար	Գումար
1	Ամերիկայի Հայ Օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ	15000	5,067	76005
2	Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ	25000	5,067	126675
3	«Մեծն Ներսես»բարեգործական հասարակական կազմակերպություն	20510	5,067	103934
	ԸՆԴԱՄԵՆԸ	60510		306614


19.12.2014թ.

«Մեծն Ներսես» ԲՀԿ գործադիր տնօրեն




**Նյութային օգնության Հիմնադրամի կողմից առաջիկայում ստացվելիք
ամառային կոշիկների բաշխման ցանկ:**

N	Կազմակերպության անվանում	Քանակ (զույգ)
1	«Մեծն Ներսես» ԲՀԿ շահառուներ (Երկողմանի և միակողմանի ծնողագուրկ երեխաներ և հաշմանդամներ)	3122
2	Նուբարաշենի թիվ 11 (հատուկ) օժանդակ դպրոց	100
3	ՀՕՄ (Սիրիյահայ երեխաներ)	900
4	“Լուս Աստղ” հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ	150
5	Մարի Իզմիրյանի անվան մանկատուն ՊՕԱԿ	90
6	Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր	180
7	“Ջատիկ” աջակցության կենտրոն	70
8	“Փոքր Միեր” կրթահամալիր	300
9	Կենտրոն վարչական շրջանի սոց. բաժին	450
10	Հայկական Կարմիր խաչ ընկերություն	180
11	Ռուսաց լեզվի և գրականության մանկ. վետերանների միություն	250
12	Երևանի թիվ 62 միջն. դպրոց	350
13	Երևանի Ռուսթավելու անվան թիվ 23 միջն. դպրոց	70
14	Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն ՀԿ	300
15	Նորք Մարաշ վարչական շրջանի սոցիալապես անապահով խավերի	500



16	«Այսօրվա լայթ Հաուս» բարեգործական հիմնադրամ	90
17	ՀՀԵԿՄ Թալին տարածքային բաժանմունք	300
18	ՀՀԵԿՄ Վայոց Ձորի տարածքային բաժանմունք	300
19	Արմավիրի մարզ Շահումյան գյուղ	120
20	Արմավիրի մարզ Երվանդաշատ գյուղ	210
21	Արմավիրի մարզ Արգինե գյուղ	150
22	Արմավիրի մարզ Բազարան գյուղ	150
23	Արմավիրի մարզ Շենիկ գյուղ	150
24	Վաղարշապատ մարզական ակումբ	90
25	Արմավիրի մարզ Այգեկ գյուղ	120
26	Արագածոտնի մարզ Ներքին Սասնաշեն գյուղ	200
27	Արագածոտնի մարզ գյուղ Ղազարավան	220
28	Արագածոտնի մարզ Ջառինջա գյուղ	200
29	Արագածոտնի մարզ Աշնակ գյուղի միջնակարգ դպրոց	200
30	Արագածոտնի մարզ Կարբիի Վ. Թեքեյանի անվան միջն. դպրոց	550
31	Արագածոտնի մարզ Մուղնիի Մ. Աշխյանի անվան միջն.դպրոց	70
32	Արագածոտնի մարզ Ոսկեթաս գյուղ	90
33	Արագածոտնի մարզ Ուջան գյուղ մանկապարտեզ	110

35	Արագածոտնի մարզ Արտաշավան գյուղ	100
36	Արագածոտնի մարզ Կաթավաձոր գյուղի միջն. դպրոց	100
37	Արագածոտնի մարզ գյուղ Գետափ	90
38	Կոտայքի մարզ Զառի Ժ. Սարգսյանի միջն. դպրոց	221
39	Կոտայքի մարզ Ողջաքերո գյուղ	200
40	Կոտայքի մարզ Հրազդանի երեխաների աջակցության կենտրոն	460
41	Կոտայքի մարզ Աղավնաձոր գյուղ	270
42	Գեղարքունիկի մարզ Վարսեր գյուղ	125
43	Գեղարքունիկի մարզ ք. Սևանի N 5 միջն. դպրոց	150
44	Գեղարքունիկի մարզ ք. Սևանի N 3 միջն. դպրոց	125
45	Գեղարքունիկի մարզ Գավառի մանկատուն	80
46	Գեղարքունիկի մարզ Թթու ջուր գյուղի միջն. դպրոց	140
47	Գեղարքունիկի մարզ Վահան գյուղի միջն. դպրոց	172
48	Գեղարքունիկի մարզ Խաչաղբյուր գյուղի միջն. դպրոց	120
49	Գեղարքունիկի մարզ Մաքենիսի գյուղի միջն. դպրոց	105
50	Գեղարքունիկի մարզ Նորատուս գյուղ	120
51	Գեղարքունիկի մարզ Գեղաքար գյուղ	105




53	Գեղարքունիկի մարզ Զամբարակ քաղաքի Ս. Քոչարյանի անվան միջն. դպրոց	166
54	Գեղարքունիկի մարզ Զամբարակ քաղաքի N1 ավագ դպրոց	423
55	Գեղարքունիկի մարզ Զամբարակ քաղաքի N1 հիմնական դպրոց	200
56	Շիրակի մարզ «Թռչունյան տուն» մանկատուն	200
57	Շիրակի մարզ Երազգաորս գյուղ միջն. դպրոց	155
58	Շիրակի մարզ Բենյամին գյուղ	150
59	Շիրակի մարզ Թավշուտ գյուղ	80
60	Շիրակի մարզ Մեղրաշատ գյուղ	80
61	Շիրակի մարզ Հովտաշեն գյուղ	50
62	Շիրակի մարզ Կամո գյուղ	180
63	Շիրակի մարզ Զաջուռ գյուղ	90
64	Շիրակի մարզ Զիթանքով գյուղ	230
65	Շիրակի մարզ Գուսաննա գյուղ	140
66	Շիրակի մարզ Սառնաղբյուր գյուղ	80
67	Շիրակի մարզ Ոսկեհասկ գյուղ	50
68	Լոռու մարզ Դսեղ գյուղի միջն. դպրոց	250
69	Լոռու մարզ Աինիձոր գյուղի հիմնական դպրոց	120
70	Լոռու մարզ Լորուտ գյուղ միջն. դպրոց	180

70	Սյունիքի մարզ Խոնավաճառ գյուղ	60
71	Սյունիքի մարզ Տանձավեր գյուղ	30
72	Սյունիքի մարզ Կապան քաղաքի N 3 հատուկ կրթահամալիր	150
73	Սյունիքի մարզ Արծվանիկ գյուղ	110
74	Սյունիքի մարզ Դավիթ Բեկ գյուղ	117
75	Սյունիքի մարզ Եղվարդ գյուղ	62
76	Տավուշի մարզ Հովք Գյուղ	60
77	Տավուշի մարզ Բաղանիս գյուղ	160
78	Տավուշի մարզ Ջոջևան գյուղ	140
79	Տավուշի մարզ Մովսես գյուղ	200
80	Տավուշի մարզ Պառավաքար գյուղ	200
81	Տավուշի մարզ Ներքին Կարմիր աղբյուր գյուղ	200
82	Տավուշի մարզ Բերքաբեր գյուղ	90
83	Տավուշի մարզ Էճկաձոր գյուղ հիմն. դպրոց	210
84	Տավուշի մարզ Այգեհովիտ գյուղ	180
85	Տավուշի մարզ Վազաշեն գյուղ	120
86	Տավուշի մարզ Դիտավան գյուղ	210
87	Վայոց Ձորի թեմի Առաջնորդարան	550

88	Վայոց Ձորի մարզ Խաչուկ գյուղ	120
89	Վայոց Ձորի մարզ Արին գյուղ	90
90	Վայոց Ձորի խնձորուտ գյուղ	100
91	Վայոց Ձորի մարզ Մարտիրոս գյուղ	157
92	Վայոց Ձորի մարզ Սեբս գյուղ	60
93	Վայոց Ձորի մարզ Արտավան գյուղ	60
94	Վայոց Ձորի մարզ Բարձրունի գյուղ	90
95	Վայոց Ձորի Ջաջիթափ գյուղ	255
96	Արարատի մարզ Դաշտաքար գյուղ միջն. դպրոց	130
97	Արարատի մարզ Գոռավան գյուղ	210
98	Արարատի մարզ Լանջազատի միջն. դպրոց	120
99	Արարատի մարզ Վարդաշատ գյուղ	150
100	ԼՂՀ մարտակերտի շրջանի Ակնաբերդ գյուղի Շ. Մեղրյանի անվան միջն. դպրոց	180
ԸՆԴԱՄԵՆԸ		20510

19.12.2014թ.

«Մեծն Ներսես» ԲՀԿ գործադիր տնօրեն



Ս. Հարությունյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1304 - Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 07/80-2/23980-14 և դեկտեմբերի 17-ի N 06/18-4/23699-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Fujairah Culture & Media Authority միավորման կողմից Հայաստանի թատերական գործիչների միավորում հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի (53 տեղ, 685 կգ ընդհանուր քաշով, 6,000 Արաբական Էմիրությունների դիրհամին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 18,924 Արաբական Էմիրությունների դիրհամ, բեռի ցանկը կցվում է, «Հվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսվում է տրամադրել Երևան քաղաքում ընթացող Թատրոնի միջազգային ինստիտուտի 34-րդ միջազգային համաշխարհային կոնգրեսի մասնակիցներին:

2. «Հայաստանի թատերական գործիչների միավորում» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ



15/12.5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ
СОЮЗ ТЕАТРАЛЬНЫХ ДЕЯТЕЛЕЙ АРМЕНИИ - ARMENIAN THEATRE WORKER'S UNION
Yerevan, Mashtots 13 0002; Tel/Fax: (+37410) 538.496; e-mail: itiarmenia@yahoo.com

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆԻՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՑԱՆԿ


N	Ապրանքի անվանումը	Քաշը(կգ)	Արժեքը
1	Գովազդային վահանակներ մետաղյան ձող իր տակդիրով	40	500
2	Լիցքավորիչ սարքեր	50	800
3	Լիցքավորիչ սարքեր	43	450
4	USB կուտակիչներ	3.5	850
5	Մետաղյա բեյջեր	3.5	150
6	Դրոշներ	7	150
7	Բրոշյուրներ	293	700
8	Շապիկներ	224	1,200
9	Շրջանակներ նկարի	8	800
10	Ստվարաթղթե տուպրակներ	13	400
	ընդամենը	685	6000

Հարգանքով, ՀԹԳՄ նախագահ՝

(Signature)

Հակոբ Ղազանչյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1305 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-928-Ա ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ՄԱՍԻՆ

(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 07/80-2/23872-14 և դեկտեմբերի 17-ի N 06/18-4/23694-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Ռուսաստանի Դաշնությունից «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից ձեռք բերված՝ արևածաղիկի քուսպը (10,000 կգ ընդհանուր քաշով 90,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,000 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզում գյուղացիական բնակչության կենսամակարդակի բարձրացման և պարենի անբավարարվածության կրճատման» ծրագրի մասին N Մ-928-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1021-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1306 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-928-Ա ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ՄԱՍԻՆ N 1**

(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 07/80-2/23865-14 և դեկտեմբերի 17-ի N 06/5-1/23690-14 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Վրաստանից «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից ձեռք բերված՝ եգիպտացորենի հատիկները (22,000 կգ ընդհանուր քաշով 5,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,100 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ,) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզում գյուղացիական բնակչության կենսամակարդակի բարձրացման և պարենի անբավարարվածության կրճատման» ծրագրի մասին N Մ-928-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1021-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1307 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-928-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 20-ի N 07/80-2/24257-14 և դեկտեմբերի 19-ի N 06/3-3/24048-14 եզրակացությունները, որոշում է:


1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2013 թվականի հոկտեմբերի 14-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզում գյուղացիական բնակչության կենսամակարդակի բարձրացման և պարենի անբավարարվածության կրճատման» ծրագրի մասին» N Մ-928-Ա (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1021-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00040569) 2014 թվականի նոյեմբերի 11-ին կնքված աուդիտորական ծառայությունների մատուցման թիվ AT-AU-084-14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1308 -Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1029-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«ԻԿՕՄ-ի հայկական թանգարանների ազգային կոմիտե» հասարակական
կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության
2014 թվականի դեկտեմբերի 22-ի N 07/80-2/24417-14 և դեկտեմբերի 23-ի N 06/18-4/24490-14
եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «ԻԿՕՄ-ի հայկական թանգարանների ազգային կոմիտե»
հասարակական կազմակերպության կողմից ձեռք բերված տեսաձայնային և լուսաձայնային
սարքերը և մասերը (4 տեղ, 737 կգ ընդհանուր քաշով, 35,746.66 եվրոյին համարժեք դրամ
ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,358.6 եվրո և 35 տեղ, 756
կգ ընդհանուր քաշով, 39,454 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ,
փոխադրման և այլ ծախսերը կազմել են 10,681.90 եվրո, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծվում է
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի՝ 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «ԻԿՕՄ-ի հայկական
թանգարանների ազգային կոմիտե» հասարակական կազմակերպության կողմից
իրականացվող «Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային
կազմակերպության հիմնական ցուցադրության նախագծման և իրականացման» ծրագրի
մասին» N Մ-1029-Ա հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1309 - Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆ» ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅՑԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 22-ի N 07/80-2/24445/-14 և դեկտեմբերի 23-ի N 06/5-1/24484-14 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Պատիվ Ռազմահայրենասիրական» կազմակերպության կողմից «Հայկական Լեգեոն» կամավորականների հայրենասիրական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի (օգտագործված հագուստ՝ 70 տեղ, 1,300 կգ ընդհանուր քաշով, 600 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 300 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը: Բեռն անհատույց բաշխվելու է Արարատ քաղաքի զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին աջակցող հասարակական կազմակերպությանը և Կոտայքի մարզի զոհված ազատամարտիկների ընտանիքներին:

2. «Հայկական Լեգեոն» կամավորականների հայրենասիրական հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1310 - Ա
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 23-ի N 07/80-2/24453-14 և դեկտեմբերի 19-ի N 06/3-3/24041-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 19-ի N 02/14/10184 -14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 31,929,400 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեոնային Ղարաքաղի Հանրապետության համայնքային կենտրոնների կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2014 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված N ԼՂ-Կ-11/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և տեղադրում Մուշկապատ գյուղի համայնքային կենտրոնում՝ 11,575,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.


2) «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2014 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված N ԼՂ-Կ-13/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածում նշված գույքի վաճառք,

տեղափոխում և տեղադրում Խաչմաչ գյուղի համայնքային կենտրոնում՝ 10,176,900 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2014 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված N ԼՂ-Կ-12/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և տեղադրում Քարինտակ գյուղի համայնքային կենտրոնում՝ 10,176,900 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեոնային Ղարաքաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Մյա Կարդանյան

«22» հոկտեմբերի 2014թ.

**«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքային կենտրոնների կահավորում»
ԾՐԱԳԻՐ**

1. Ծրագրի նպատակը	Ապահովել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Մուշկապատ, Ասկերանի շրջանի Խաչմաչ և Շուշիի շրջանի Քարինտակ գյուղերի համայնքային կենտրոնները անհրաժեշտ կահույքով
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3. Բարեգործը	Հանգանակություններից ստացված միջոցներից
4. Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Լեռնային Ղարաբաղ, սոցիալական բնագավառ
6. Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 31.929.400,00 դրամ:
7. Բարեգործություն ստացողը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Մուշկապատ, Ասկերանի շրջանի Խաչմաչ և Շուշիի շրջանի Քարինտակ գյուղերի համայնքային կենտրոնները
8. Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ.

2

		դեկտեմբերի 11-ից մինչև 2015թ.մայիսի 11-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Մուշկապատ, Ասկերանի շրջանի Խաչմաչ և Շուշիի շրջանի Քարինտակ գյուղերի համայնքային կենտրոնների կահավորում 2014թ. դեկտեմբերի 11-ից մինչև 2015թ.մայիսի 11-ը: Մուշկապատ՝ 11.575.600,00 դրամ առանց ԱԱՀ-ի, Խաչմաչ՝ 10.176.900,00 դրամ առանց ԱԱՀ-ի, Քարինտակ՝ 10.176.900,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՍՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերի Հավելված թիվ 1-ի ցանկի համաձայն գույքի պատրաստում, գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում: Մուշկապատ՝ 11.575.600,00 դրամ առանց ԱԱՀ-ի, Խաչմաչ՝ 10.176.900,00 դրամ առանց ԱԱՀ-ի, Քարինտակ՝ 10.176.900,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման համեմատողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1344 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014
ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N Մ-293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Ծիծեռնակաբերդ» բարեգործական
հիմնադրամի տնօրենի 2014 թվականի դեկտեմբերի 17-ի N Ց/Թ-86 գրությունը, **ո Ր Ո -
2 ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Ծիծեռնակաբերդ»
բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության
թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման
համաշինարարական աշխատանքներ» (4-րդ փուլ)» N Մ-293-Ա որոշմամբ հաստատված
ծրագրի 8-րդ կետում «01.04.2014թ. – 31.10.2014թ.» բառերը փոխարինել «01.04.2014թ.
– 30.04.2015թ.» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1312 -Ա
քաղ. երևան

**«ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ»
ԱՄՆՈՒԱՅԻՆ ԲԱԿԱՅԻՆ ՃԱՄԲԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի N 07/80-2/21797-14 և դեկտեմբերի 1-ի N 06/3-3/21706-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 2-ի N 02/9442-14, Հայաստանի Հանրապետության աշխարհաբանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի N ՖԲ/ԱՆՄ-4/9664-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի նոյեմբերի 28-ի N 01/07-1/14700-14 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2014 թվականի նոյեմբերի 28-ի N 101/104.3.2/5793-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Բարեգործական որակել «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 12,262,500 դրամ արժեքով «Սուրբ Աստվածածին» ամառային բակային ճամբարի կազմակերպում» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամին՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Տիրամայր Հայաստանի Դատախարարության Կենտրոն» հիմնադրամի

Մեծավորուհի Զարուհի (քույր Հակինթա) Մուրադյանի կողմից

« 24 » Նոյեմբեր 2014թ.

«Սուրբ Աստվածածին» ամառային բակային ճամբարի կազմակերպում

Ծրագիր

1	Ծրագրի նպատակը	Յուրաքանչյուր տարի «Տիրամայր Հայաստանի Դատախարարության Կենտրոն» հիմնադրամի տարածքում՝ ամառային բակային «Սուրբ Աստվածածին» ճամբարում, նրկու հերթով հանգստանում, կրթվում և դաստիարակվում են մոտ 350 երեխա, Տաշիր քաղաքից: Ակտիվ հանգստի հետ երեխաները ուսանում են կրոնի պատմություն, երգ, համակարգիչ, նկարչություն, ձեռագործ, օտար լեզուներ, ինչպես նաև մասնակցում են սպորտայնդիսաների, զվարճալի և ինտելեկտուալ խաղերի: Կազմակերպվում են շրջագայություններ դեպի Սևան, Խոր-վիրապ, Մատենադարան, Լոռի-Բերդ, Դեղդղապարկ այգի և պատմամշակութային այլ վայրեր: Ճամբարի ընթացքում երեխաներին բաժանվում են անվճար գրենական պիտույքներ:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հարկային և մաքսային արտոնություններից:
3	Բարեգործը	Ամբողջ ծրագիրը հիմնականում ֆինանսավորում են՝ 1. «ԱՄՆ-ից Տեր և Տիկին՝ Տոմպալաքյան» 8 միլիոն 200 հազար դրամ 2. «ԱՄՆ-ի և Կանադա-ի Առաջնորդարան» 4 միլիոն 62 հազար 500 դրամ
4	Ծրագիրը Կատարողը	Ծրագիրն անմիջանակաևորեն կազմակերպող, իրականացնող և պատվիրատու է հանդիսանում «Տիրամայր Հայաստանի Դատախարարության Կենտրոն» հիմնադրամը. (հասցեն՝ Ք. Տաշիր Գրիբոլեդովի 50-ա ՀՎՀՀ 07204063):
5	Ծրագրի Իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվելու է Լոռու մարզի «Տիրամայր Հայաստանի Դատախարարության Կենտրոն» հիմնադրամ-ի տարածքում: Ծրագիրն առնչվում է սոցիալական և կրթական ոլորտներին:
6	Ծրագրի բյուջեն	Բուն ճամբարի իրականացման ժամկետը՝ հունիս - օգոստոս ամիսներն են, որի ընթացքում տարեկան ծախսվում է՝ 4 միլիոն 87 հազար 500 դրամ և երեք տարվա համար 12 միլիոն 262 հազար 500 դրամ, 01 հունվար 2015թ - 31 դեկտեմբեր 2017թ.

7	Բարեգործություն ստացողը	Ամեն տարի ծրագրից կազմվեն Լոռու մարզի Տաշիր քաղաքի 6-18 տարեկան մոտ 350 երեխաներ՝ անկախ կրոնական պատկանելիությունից:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը շարունակական է, այժմ որակավորման է ներկայացվում 01 հունվար 2015 - 31 դեկտեմբեր 2017 թվականներին իրականացվելիք ծրագիրը:
9	Միջոցառումների նկարագրությունը ներքև, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու են՝ ❖ Ճամբարի շահագործման և կոմունալ-կենցաղային ծախսեր, տարեկան 246 հազար դրամ, երեք տարվա՝ 2015-2017թթ. համար 738 հազար դրամ, այդ թվում՝ Գազ, տարեկան ծախսվում է 85 հազար դրամ, երեք տարվա հ ա մ ա Ր 255 հազար դրամ: Էլեկտրաէներգիա, տարեկան ծախսվում է 80 հազար դրամ, երեք տարվա համար՝ 240 հազար դրամ: Ջուր, տարեկան ծախսվում է 21 հազար դրամ, երեք տարվա համար 63 հազար դրամ: Հեռախոսակապի և ինտերնետ ծառայությունների համար տարեկան ծախսվում է 60 հազար դրամ՝ երեք տարվա համար 180 հազար դրամ: ❖ Ճամբարի իրականացման համար անհրաժեշտ սննդի, դեղորայքի և հիգիենիկ պարագաների, գրենական պիտույքների, արշավների դեպի պատմամշակութային հուշարձաններ, մարզական գույքի ձեռք բերման և այլ չկանխատեսված ծախսեր, տարեկան 3 միլիոն 801 հազար դրամ, երեք տարվա համար՝ 11 մ ի լ ի ո ն 403 հ ա զ ա Ր դ Ր ա մ , ա յ դ թ վ ու մ՝ Մնուկ տարեկան 1 միլիոն 600 հազար դրամ, երեք տարվա համար 4 միլիոն 800 հազար դրամ, Գրենական պիտույքներ տարեկան 150 հազար դրամ, երեք տարվա համար 450 հազար դրամ, Հիգիենիկ պարագաներ տարեկան՝ 255 հազար դրամ, երեք տարվա համար 765 հազար դրամ, Մարզական գույքի ձեռք բերման ծախսեր՝ տարեկան 1 միլիոն 500 հազար դրամ, երեք տարվա համար 4 միլիոն 500 հազար դրամ, Դեղորայք տարեկան 25 հազար դրամ, երեք տարվա համար 75 հազար դրամ, Շրջագայությունների ծախս տարեկան 271 հազար դրամ, երեք տարվա համար 813 հազար դրամ: ❖ Կազմակերպչական ծախսեր՝ տարեկան 40 հազար 500 դրամ,

		երեք տարվա համար 121 հազար 500 դրամ՝ Ճամբարը կազմակերպվում և գործում է ամռան 3 ամիսների ընթացքում Ընդամենը միասին՝ տարեկան՝ 4 միլիոն 87 հազար 500 դրամ, երեք տարվա համար՝ 01 հունվար 2015թ.-31 դեկտեմբեր 2017թ. 15/9 12 միլիոն 262 հազար 500 դրամ:
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Օրագրի իրականացման ընթացքում՝ կոմունալ ծախսերը կազմում են՝ ➤ Գազ, տարեկան ծախսվում է 85 հազար դրամ երեք տարվա 255 հազար դրամ: ➤ Էլեկտրաէներգիա, տարեկան ծախսվում է 80 հազար դրամ, երեք տարվա համար՝ 240 հազար դրամ: ➤ Ջուր, տարեկան ծախսվում է 21 հազար դրամ, երեք տարվա համար 63 հազար դրամ: ➤ Հեռախոսակապի և ինտերնետ ծառայությունների համար տարեկան ծախսվում է 60 հազար դրամ՝ երեք տարվա համար 180 հազար դրամ: ➤ Դեղորայք տարեկան 25 հազար դրամ, երեք տարվա համար 75 հազար դրամ: ➤ Հիգիենիկ պարագաներ տարեկան՝ 255 հազար դրամ, երեք տարվա համար 765 հազար դրամ: ➤ Գրենական պիտույքներ տարեկան 150 հազար դրամ, երեք տարվա՝ համար 450 հազար դրամ: ➤ Մենդամթերք տարեկան 1600 հազար դրամ, երեք տարվա համար 4 միլիոն 800 հազար դրամ: ➤ Շրջագայությունների ծախս տարեկան 271 հազար դրամ, երեք տարվա համար 813 հազար դրամ: ➤ Մարզական գույքի ձեռք բերման ծախսեր՝ տարեկան 1 միլիոն 500 հազար դրամ, երեք տարվա համար 4 միլիոն 500 հազար դրամ, կազմակերպչական ծախսեր՝ տարեկան 40 հազար 500 դրամ, երեք տարվա համար 121 հազար 500 դրամ՝ Ընդամենը միասին՝ տարեկան՝ 4 միլիոն 87 հազար 500 դրամ, երեք տարվա համար՝ 01 հունվարի 2015թ. – 31 դեկտեմբերի 2017թ. 15/9 12 միլիոն 262 հազար 500 դրամ:

11	Օրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Օրագիրը նախատեսում է կազմակերպչական ծախսեր՝ տարեկան 40 հազար 500 դրամ, երեք տարվա համար 121 հազար 500 դրամ՝ հեռախոսակապի, քույրերի և կամավորական անձնակազմի կարիքների համար, որը կազմում է ծրագրի բյուջեյի մեկ %-ը: 15/9
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Օրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Լոռու մարզպետարանի և Տաշիրի քաղաքապետարանի հետ:
13	Օրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հիմնական վերահսկողությունն իրականացվում է ֆինանսավորող բարերարների կողմից: Այդ նպատակով նրանք պետք է ներգրավեն ներքին խորհրդատուների, տեղական և միջազգային աուդիտորների: Մահմանված կարգով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնարարություն կներկայացվի տեղեկատվություն իրականացվող ծրագրերի վերաբերյալ:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1313 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ
ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 22-ի N 07/80-2/24316-14 և դեկտեմբերի 19-ի N 6/5-1/24056-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 17-ի N ԱՄ/22.2/13487-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Վաշինգտոնի հայ-ամերիկյան առողջապահական ասոցիացիայի կողմից «IDA Foundation» կազմակերպության միջոցով Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված դեղորայքի (5 տեղ, 37 կգ ընդհանուր քաշով, 548.70 եվրո արժեքով, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 174.09 եվրո, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1314 -Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-803-Ա ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ՄԱՍԻՆ («ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՂԱՆԱՐԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 17-ի N 07/80-2/23559-14 և դեկտեմբերի 17-ի N 06/5-1/23556-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ֆինանսավորմամբ ձեռք բերված խորքային պոմպը (2տեղ, 115 կգ ընդհանուր քաշով, 945.40 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 45,000 դրամ, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «Երևանի կենդանաբանական այգու բարեկարգում և արդիականացում» ծրագրի մասին» N Մ-803-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 14-ի N Մ-927-Ա և 2014 թվականի դեկտեմբերի 22-ի N Մ-1302-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և ~~Երևանի կենդանաբանական այգի~~ քաղաքապետին:

ՆԱԽԱԳԻՐ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1315 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-803-Ա ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ՄԱՍԻՆ («ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱՔԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ) N 1

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 17-ի N 07/80-2/23558-14 և դեկտեմբերի 17-ի N 06/5-1/23560-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ֆինանսավորմամբ ձեռքբերված կենդանիների համար նախատեսված տարածքների ախտահանող նյութերը (2տեղ, 21 կգ ընդհանուր քաշով, 106.60 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 221,550 դրամ, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «Երևանի կենդանաբանական այգու բարեկարգում և արդիականացում» ծրագրի մասին» N Մ-803-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 14-ի N Մ-927-Ա և 2014 թվականի դեկտեմբերի 22-ի N Մ-1302-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը և Երևանի քաղաքապետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1316 -Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-947-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱԳԱՊԵ» ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 22-ի N 07/80-2/24312-14 և դեկտեմբերի 20-ի N 06/5-1/24216-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N ԱՄ/22.2/ 13500-14 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 20-ի N ՖԲ/ԱՆՄ-4/10517-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Հյուսիսային Կարոլինա նահանգի մեթոդիստական եկեղեցու կողմից Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով «Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (160 տեղ, 7,865 կգ ընդհանուր քաշով, 87,532 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 7,500 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» տարածաշրջանային մարսատուն) ներմուծվում է Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Մարդկային տառապանքը որպես պատերազմի և բնական աղետի հետևանք» ծրագրի մասին» N Մ-947-Ա (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-588-Ա և 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1264-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ




ԳՈՒՅՔԱՅՈՒՑԱԿ - ԱՄ-114Գ-2708
Բեռնագիր - NAM1984202
1 x 40' կոնտեյներ - GESU 687199-2
Կապարակնիք - B2001073
Բեռնված 2014 թ. դեկտեմբերի 9-ին
Միացյալ Մեթոդիստական եկեղեցու
Հյուսիսային Կարոլինայի համաժողովի (թեմի) կողմից
Կոթիֆիլդ Ռիջ Փլեյս 700, Պարմեր, 27529, Հյուսիսային Կարոլինա, ԱՄՆ

Պարունակությունը՝ նվիրաբերված մարդասիրական օգնություն, իրեր ոչ վաճառքի համար

Առաքիչ՝ Միացյալ Հայկական Հիմնադրամ
Ն. Խաղաղության պողոտա 1101, Մուխր 204
ԱՄՆ, ԿԱ, Գլենդեյլ, 91202

Առաքման վայր՝ ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿԲԿ ՀՀ մասնաճյուղ
Վիկտոր Համբարձումյանի 18 փ., բն. 11
Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0033,

ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏԵՂ	Քաշը (կգ)	ԱՐԺԵՔ
Անկողնային պարագաներ	1	9.1	25.00
Հագուստ և արքեստարներ	9	75.3	345.00
Երեխաների Ամանորյա տուփեր-3741 տուփ	73	7,093.0	74,070.00
Ղարոցական պարագաներ	61	612.8	12,490.00
Հիգիենայի պարագաներ	2	9.5	65.00
Գլխարկներ	10	47.2	410.00
Չեռնոցներ	3	13.6	117.00
Նոր խաղալիքներ	1	4.5	10.00
ԸՆԴԱՄԵՆԸ	160	7,865.0	87,532.00




15/12.1

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» կրոնաթարեգործական կազմակերպության ՀՀ մասնաճյուղի հասցեով
2014թ. դեկտեմբեր ամսին ուղարկված մարդասիրական բեռան բաշխման ցուցակ

15/12.19

Վայրը	Ապրանքի անվանումը	Տեղ	Բաշխվող քանակը / կգ	Արժեքը ԱՄՆԴ
ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի և գյուղերի «ԱԳԱՊԵ»-ում գրանցված սոցիալապես անապահով մոտ 1000 ընտանիքներ	Անկողնային պարագաներ	1	9.1	25.00
	Հագուստ և աքսեսուարներ	9	75.3	345.00
	Երեխաների Ամանորյա տուփեր-3741 տուփ	73	7,093.0	74,070.00
	Ղարոցական պարագաներ	61	612.8	12,490.00
	Հիգիենայի պարագաներ	2	9.5	65.00
	Գլխարկներ	10	47.2	410.00
	Չեռնոցներ	3	13.6	117.00
	Նոր խաղաղիքներ	1	4.5	10.00



ԱՄՆ «ԱԳԱՊԵ» կրոնաթարեգործական
կազմակերպության ՀՀ մասնաճյուղի
ՏԵՂԵԿՆ Ե. ՍԵՐՈՒՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1317 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՍԲ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 15-ի N 07/80-2/23134-14 և դեկտեմբերի 16-ի N 06/5-1/23274-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի հասցեով ստացված արևային պանելները, արևային ջրատաքացուցիչների կոլեկտորները, ջերմափոխանակիչ բաքերը և փողոցային լուսատուները (163 տեղ, 4,981 կգ քաշով, 30,568.20 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,764,000 դրամ, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան ծրագրի մասին» N Մ-1173-Ա որոշմամբ (2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-768-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1318 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ՄԱՍԻՆ N 1 (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 15-ի N 07/80-2/23136-14 և դեկտեմբերի 16-ի N 06/3-2/23273-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի հասցեով ստացված «Էլեկտրական հովիվ» համակարգը (1 տեղ, 358 կգ քաշով, 5,312.44 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 230,000 դրամ, ՄՃՓ տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան» ծրագրի մասին» N Մ-1173-Ա որոշմամբ (2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-768-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1319 - Ա

քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 16-ի N 07/80-2/23391-14 և դեկտեմբեր 15-ի N 06/3-3/23111-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մյասնիկյան 20, ՀՎՀՀ՝ 02565835) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան» ծրագրի մասին» N Մ-1173-Ա (2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-768-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«ՇԱՎ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02225359) 2014 թվականի նոյեմբերի 25-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինանյութի մատակարարում՝ 314,750 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1320 - Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ
ՀԱՅՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՈՒ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ N 1**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 07/80-2/24819-14 և դեկտեմբերի 25-ի N 03/18-4/24801-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N ԱՄ/22.2/13907-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ Հայկական հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեոնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բժշկական սարքավորումների և պարագաների (2,377 կգ ընդհանուր քաշով, 340610 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 5,085 ԱՄՆ-ի դոլար, ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ցանկ


41-15/6.4

ԱՄՆ Միացյալ Հայկական Հիմնադրամի կողմից "MEBS GLOBAL REACH"
կազմակերպության միջոցով ԼՂՀ համար որպես մարդասիրական օգնություն
ուղղարկված բեռի

Հ/Հ	Սարանքի անվանումը	Արժեքը ԱՄՆ դոլար	Կշիռը lbs
1.	Մեկ տուփը պարունակում է 10 նոր Ստետոսկոպ	600.00	1,609
2.	Մեկ էլեկտրոնիկոգրաֆ ակերով, մոդելը՝ HP Sono 1000 (սրտի ուլտրաձայնային սարք)	56,000.00	
3.	Արհեստական հակազգագ «KONTRON» ներերակային միացմամբ, մոդելը՝ ABT 4300 / առաջին օգտագործումը՝ 1998թ./	65,000.00	
4.	2 Լողալու բարձիկներ	35.00	
5.	1 էլեկտրական ներքնակ /փչվող/	250.00	1,741
6.	Ընդհանուր ողնաշարի պլուսակ X-Ray cassette	270.00	
7.	Մեկ բազկաթոռ բժշկական	100.00	
8.	Երկու նեզատոսկոպ	1,300.00	
9.	Սրտի և շնչուղիների մոնիտոր մոդելը՝ Hewlett Packard (GMBH) 78.352 (որոշում է արյան ճնշումը, սրտի աշխատանքը և արյան խտությունը) /առաջին օգտագործումը՝ 2005թ./	11,000.00	
10.	Կարդիո-տեխոգրաֆ, մոդելը՝ Hewlett Packard 80-300 A (հղի կանանց համար) /առաջին օգտագործումը՝ 2000թ./	15,000.00	
11.	Երկու էլեկտրական ստեր Valleylab միաբևեռ և երկբևեռ էլեկտրով (մեկը 30 հզորությամբ, երկրորդը՝ 20A)	2,800.00	
12.	Վիրաբուժական ապփրատոր CURADIA C 78	1,100.00	
13.	Չորս բժշկական ճոնիկ	220.00	
14.	10 զույգ արտրոզի ֆիքսատոր (2 զույգ մանկանան)	400.00	
15.	Մեկ ջեռուցող բլոկ (TERMOLYNE BARNSTEAD DB 104210-33)+ մեկ ջեռուցող բլոկ (LAB LINE MULTIBLOK BARSTEAD 2050-1CE)+ 1 քի չափող գործիք (CHECKER HANNA RI 02895)+ մեկ ջերմաչափ (TESTO 110 0560 1106)+ մեկ էլեկտրական պիպետակա (ID PIPETOR EP 3 DAMED ID)+ մեկ էլեկտրոնային պիպետակա (PIPETMAN	1,250.00	

2015/6.4

	GILSON)+մեկ լոգարան (311P30)+50 աչքի պիպետկա		
16.	Մեկ օպերացիոն լույս	1,900.00	
17.	4 հատ լսելու ստեսասկոպ և 80 հիմնական վիրաբուժական կլիպս և մկրատ	500.00	
18.	50 գիպսե ֆիքսատոր	200.00	
19.	80 արկղ ձեռքի հիգիենայի համար միջոցներ +1 լվացարան +1 զուգարանակներ	385.00	
20.	Մեկ նեգատոսկոպ	1,200.00	
21.	Ներմկանային և ներմաշկային ասեղներ	100.00	
22.	Ներարկիչ CT Scan-i համար	2,600.00	
23.	300 ներարկման կապեր	600.00	
24.	Մեկ վիրաբուժական ժգուտ	1,600.00	
25.	Վիրաբուժական սարք?	600.00	
26.	Ուլտրաձայնային սարք Hitachi 8000, 3 զոնդերով և սև ու սպիտակ Mitsubishi պրինտերով: Մոդելը 2006թ.:	81,000.00	590
27.	Ցենտրիֆուգի սարք կենսաբանական անալիզների համար	450.00	1,301
28.	Մեկ տուփ կենսաբանական լաբորատորիայի նյութեր	750.00	
29.	Մագնիստֆոն	200.00	
30.	Գոլորշու ստերիլիզատոր .ավտոկլավ , մոդել՝ LISA ավտոկլավ MB 17. Մոդել 2005թ.	4,000.00	
31.	Ակնաբուժական սարքերի սեղան և մեկ աթոռ	4,000.00	
32.	Մեկ տոնոմետր /կամերտոն/.CANON TX-10	2,300.00	
33.	Մեկ ավտո KERO բեկումաչափ. TOPCON KR 8100	25,000.00	
34.	Մեկ լապտեր. Haag –streit B9000 տոմոմետրի հետ	17,200.00	
35.	Մեկ փորձարկման պրոյեկտոր. Luneau L29	4,700.00	
36.	Ակնաբուժական պարագա. Clement & Clark Ֆրիդման անալիզատոր 2	32,000.00	
37.	Հետազոտման համար ոսպնյակներ, չափիչ մանրադիտակ "Nikon"	2,000.00	
38.	Փոքրիկ սարքեր հետազոտության համար	2,000.00	
Ընդամենը՝		340,610.00	5,241



Handwritten signature: Hovh. G. Hovhanyan



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1321 - Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N Մ-293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՆՆԱԿԱՔԵՐՈՂ»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 26-ի N 07/80-2/24941-14 և դեկտեմբերի 23-ի N 06/3-3/24502-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշխարհարական աշխատանքներ» ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-293-Ա որոշմամբ (2014 թվականի հոկտեմբերի 24-ի N Մ-1066-Ա և 2014 թվականի դեկտեմբերի 26-ի N Մ-1320-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝


1) «Մոսկովյան ինվեստիցիոն շինարարական ընկերություն – ք. Երևան» ԱՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02573694) 2014 թվականի նոյեմբերի 1-ին կնքված N 42 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ինժեներատեխնիկական վերահսկողության իրականացում՝ 1,230,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Սատրոն» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00068497) հետ 2014 թվականի դեկտեմբերի 18-ին կնքված N 43 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ձայնային

ապահովման համակարգի մոնտաժում՝ 2,815,150 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1322 - Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 18-Ի N Մ-689-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 22-ի N 07/80-2/24419-14 և դեկտեմբերի 19-ի N 6/3-3/24027-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 18-ի «Պ. Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի հիմնանորոգման նախագծում» ծրագրի մասին» N Մ-689-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «մինչև 2014 թվականի նոյեմբերի 19-ը» բառերը փոխարինել «մինչև 2015 թվականի ապրիլի 9-ը» բառերով:

2. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01508665) 2014 թվականի դեկտեմբերի 9-ին կնքված N 87 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության իրականացում՝ 620,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1323 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՈՒՋԱՆ ԳՅՈՒՂԻ «ԶՈՐԱՎԱՐ ԱՆՊՐԱՆԻԿԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ
ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՀԱՅՑԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի -ի N և դեկտեմբերի -ի N եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակելի հոլանդական Global Aid Network բարեգործական (ոչ առևտրային) կազմակերպության միջոցներով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ուջան գյուղի «Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ուղարկված բեռի (739 տեղ, 8890 կգ ընդհանուր քաշով, 3210 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3320 եվրո, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը (բաշխման ցանկը կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ուջան գյուղի «Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՈՒՋԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ

Բեռի բաշխման ցանկ

Բեռը տրամադրվելու է մարզի հետևյալ դպրոցներին , Ուջանի գյուղապետարանին, - մասնավորապես՝

1. 145 հատ աշակերտական սեղան/օգտագործված/, 145 հատ աշակերտական աթոռ /օգտագործված/, 3 ճաշարանի սեղան /օգտագործված/, 18 հատ աթոռ /օգտագործված/, 2 հատ ուսուցչանոցի սեղան/օգտագործված/ - Բյուրականի միջն. դպրոցին

2. 10 հատ աշակերտական սեղան/օգտագործված/ - 10 աշակերտական աթոռ /օգտագործված/ ուսուցչանոցի 6 աթոռ /օգտագործված/, 3 սեղան ուսուցչանոցի /օգտագործված/ - Կաթավաձորի միջն. դպրոցին

3. 34 հատ մանկական երկհարկանի մահճակալներ /օգտագործված/- Թալիկի թիվ 3 մանկապարտեզ ՀՈԱԿ-ին

4. 12 հատ աշակերտական սեղան/օգտագործված/, 12 աշակերտական աթոռ /օգտագործված/- Թալիկի գեղարվեստի տանը


5. 6 հատ աթոռ /օգտագործված/, 1 գրասեղանի աթոռ/օգտագործված/- Ուջանի գյուղապետարանին

6. 1 հատ գրասեղանի աթոռ/օգտագործված/- Արագածոտնի մարզպետարանին

8 քայլակները ,9 զույգ հաշմանդամի հենակները , 7 զուգարանի աթոռները տրվելու են Ուջանի կարիքավոր հաշմանդամներին ,մնացած 184 հատ տարբեր տիպի աթոռները , 4 գրասեղանի աթոռները , 7 խաղալիքները մնալու են Ուջանի միջնակարգ դպրոցում ,120 արկղ տակդիրները բաշխվելու են դպրոցի աշխատողներին :

Դպրոցի տնօրեն՝  /Ս. Հարությունյան /

12. XII - 2014 թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1324 - Ա
քաղ. Երևան

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 07/80-2/23799-14 և դեկտեմբերի 17-ի N 06/5-1/23605-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Բելոռուսիայից, Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի՝ մոմանյութ 40 տեղ, 21,130 կգ ընդհանուր քաշով, 35,600 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ծխական մոմի արտադրության համար:


2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1325 - Ա
քաղ. երևան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 3-ի N 07/80-1/22114-14 և N 06/8-4/22108-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնությունից, Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի՝ ցերեզին (21 տեղ, 20,307 կգ ընդհանուր քաշով, 49,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,555,000 դրամ, «Արարատյան» Տ/Ս) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է ծխական մոմի արտադրության համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1326 - Ա

քաղ. երևան

**ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 10-ի N 07/80-2/22682-14 և դեկտեմբերի 11-ի N 06/5-1/22837-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից, «Ուղղափառ քրիստոնեական միջազգային բարեգործություն» կազմակերպության միջոցներով, Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի հասցեով ստացված բեռի՝ գրենական պիտույքներ, խնամքի պարագաներ, փաթեթներ նորածինների համար և հիգիենայի պարագաներ (600 տեղ, 15,560,03 կգ ընդհանուր քաշով, 14.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,578 ԱՄՆ-ի դոլար, Շիրակի S/Մ, բեռի մասնացուցակը կցվում է) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է և անհատույց հանձնվելու է Շիրակի թեմի անապահով ընտանիքներին:

2. Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ս Ա Ս Ն Ա Ց ՈՒ Ց Ա Կ

Համաձայն ՀՀ ՍՕ թիվ 132 հոդվածի 1-ին կետի ս. թ. հոկտեմբերի 27-ին

թիվ 2014/22/11488 փոխադրման ամփոփագրով

Շիրակի թեմի կողմից ներմուծված ապրանքների

Գ/Գ	Ապրանքի անվանումը	Քանակը ըստ միավորի	Ընդհանուր քաշը բրուտտո կգ	Մաքուր քաշը նետտո կգ	Տեղերի քանակը	Ծագման երկիրը	Արժեքը հ/ա
1	Ատամի խոզանակ	9400	188.00	188		Հնդկաստան	350.0
2	Ատամի մածուկ FLUORIDE		1083.03	869	100	Հնդկաստան	350.0
3	Հագուստ նորածինի		1560.00	1360	80	ԱՄՆ	3000.0
4	Լողանքի սրբիչ		3954.00	3654	200	ԱՄՆ	3851.0
5	Օճառ DIAL		610.00	610		ԱՄՆ	924.4
6	Սանր		46.00	46		ԱՄՆ	80.0
7	Եղունգ կտրիչ		138.00	138		ԱՄՆ	80.0
8	Սկրատ		16.00	16		ԱՄՆ	76.6
9	Տետր (զսպանակով)		6623.00	6323	220	ԱՄՆ	2770.0
10	Քանոն (30 սմ)	7700	16.00	16		ԱՄՆ	100.0
11	Մատիտի սրիչ		16.00	16		ԱՄՆ	156.0
12	Ռետին աշակերտական		16.00	16		ԱՄՆ	156.0
13	Գնդիկավոր գրիչ	38500	154.00	154		ԱՄՆ	156.0
14	Գունավոր մատիտ		840.00	840		ԱՄՆ	766.0
15	Մաշակողական	7700	300.00	300		ԱՄՆ	14000.0
			15560.03	14546	600		

ՀԱՆՔ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ԱՆՈՒՄԱՆ ԿՈՂՄԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ *Գրադ. Գրադյան*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՐՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1327 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ԵԿԵՂԵՑՈՒ ՇՐՋԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»,
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 07/80-2/23864-14 և դեկտեմբերի 17-ի N 23589-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 17-ի N 02/14/10074-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Հայ Կաթողիկե եկեղեցու Հայաստանի համայնքի կողմից իրականացվող՝ 68,190,443 դրամ արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հայ Կաթողիկե համայնքի կողմից կառուցված եկեղեցու շրջակա տարածքի բարեկարգում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ Հայ Կաթողիկե եկեղեցու Հայաստանի համայնքի կողմից (ՀՎՀՀ՝ 05513258) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջապես կանդիդատներ են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«Ախուրյան կոոպչին» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Գյումրի, Թբիլիսյան խճուղի 1, ՀՎՀՀ՝ 05801184) 2014 թվականի նոյեմբերի 3-ին կնքված շինարարական կապալի պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀՀ, քաղ. Գյումրի, Հաղթանակի 45 հասցեում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հայ Կաթողիկե համայնքի կողմից կառուցված եկեղեցու շրջակա տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 68,190,443 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Հայ Կաթողիկե եկեղեցու Հայաստանի համայնքին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության

կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:


4. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

13/5


ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե
«Հայ կաթողիկե եկեղեցու համայնքի» առաջնորդ
Տեր Ռաֆայել Արքեպս. Մինասյան
1 մարտի
Պեկտեմբեր, 2014թ.



«ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հայ կաթողիկե համայնքի կողմից կառուցված
եկեղեցու շրջակա տարածքի բարեկարգում» 13/5

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է բարեկարգել Շիրակի մարզի Գյումրի քաղաքում Հայ Կաթողիկե Համայնքի կողմից կառուցված եկեղեցու շրջակա տարածքը:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Բարեգործները նախատեսում են ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկային արտոնություններից:
3	Բարեգործը	Ծրագիրը հիմնականում ֆինանսավորում են ֆրանսիական Օվրե Դորյան, գերմանական Ռեմովաբիս, Կիրխե Իմ Նոթ հասարակական կազմակերպությունները, Հռոմի քահանայապետական հայ Լևոնյան վարժարանը եւ այլ անհատ բարերարներ:
4	Ծրագիրը կատարողը	Ծրագիրն անմիջականորեն իրականացվում է Հայ Կաթողիկե եկեղեցու հայաստանյան համայնքի առաջնորդարանի կողմից (ՀՎՀՀ 05513258): Զ. Գյումրի, Աթաբեկյան 82:
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվելու է Գյումրի քաղաքում՝ Հաղթանակի պողոտա 45 հասցեում: Ծրագիրն առնչվում է կրոնական բնագավառի հետ:
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 68,190,449 (Վաթսուևութ միլիոն հարյուր իննսուս հազար չորս հարյուր քառասուկներ) ՀՀ դրամ
7	Բարեգործություն ստացողը	Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հայ Կաթողիկե Համայնքի մոտ 15000 հավատացյալներ:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	2014թ. նոյեմբերի 3-ից -2015թ. մայիսի 30-ը:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, ամհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Բարեկարգվող ընդհանուր տարածքը կազմում է 920 քառ. մ: Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու են հետևյալ աշխատանքները - Բարեկարգում բազայտե սալիկներով (Տամ հաստության) - Հենապատի և աստիճանների իրականացում - Ճաղաշարի իրականացում - Բազայտե եզրաքարերով սալապատում - Տարածքի կանաչապատում 68,190,449 (Վաթսուևութ միլիոն հարյուր իննսուս հազար չորս հարյուր քառասուկներ) ՀՀ դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի Աշխատանքներն իրականացվելու են 2014թ.-ի նոյեմբեր 3-ից 2015թ.-ի մայիս 30-ը:

10	Զեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու են՝ նույնը, ինչ որ 9-րդ կետում Պայմանագիրը կնքված է «Ախուրյան Կոռպչին» ՍՊԸ հետ: Պայմանագրի արժեքը կազմում է 68,190,449 (Վաթսուևութ միլիոն հարյուր իննսուս հազար չորս հարյուր քառասուկներ) ՀՀ դրամ: Աշխատանքներն իրականացվելու են 2014թ. նոյեմբերի 3-ից մինչև 2015թ. մայիսի 30-ը: Պայմանագիրը գործելու է մինչև 2015թ.-ի հունիսի 30-ը:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր մերկայացված չեն:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է Շիրակի մարզպետարանի և Գյումրու քաղաքապետարանի հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի արդյունավետությունը գնահատվում է մի քանի չափորոշիչներով: Հիմնական վերահսկողությունն իրականացվում է ֆինանսավորող բարերա ների կողմից: Այդ նպատակով մրանք պետք է մերգրավվեն մերք խորհրդատուների, տեղական և միջազգային աուտիտորների: Սահմանված կարգով ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովին է մերկայացվելու համառոտ տեղեկատվություն:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԱՐՎԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Գ Շ ՈՒ Մ

**26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1328 - Ա
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻՆԻ «ՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԹՂԹԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N 07/80-2/23073-14 և N 06/3-3/22943-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 15-ի N 01/9954-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ**

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 12,500,000 դրամ արժողությամբ «Թղթի մատակարարում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տիգրան Մեծ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505322) 2014 թվականի նոյեմբերի 29-ին կնքված N 059/014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ինդոնեզիական կամ կորեական արտադրության Օլիսթե տեսակի թղթի մատակարարում՝ 20 տոննա քանակությամբ՝ 12,500,000 դրամի չափով առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է


Մայր Աթոռ Սուրբ Եջմիածին

Վարչատնտեսական բաժնի տնօրեն

Մուշեղ եպիսկոպոս Բաղդասար

« 05 »

2014 թ.




Թղթի մատակարարում

Ծ Ր Ա Պ Ի Ր

15/4

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Եջմիածնի համար մատակարարել Ինդոնեզական կամ Կորեական ՕՎՍԵԹ տեսակի թուղթ:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Եջմիածին, ՀՎՀՀ 06800406:
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Եջմիածին, բնագավառը՝ կրթական:
6	Ծրագրի բյուջեն	12,500,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:
7	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալները:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	29 նոյեմբեր 2014թ. – 29 դեկտեմբեր 2015թ.:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Եջմիածնի համար մատակարարել Ինդոնեզական կամ Կորեական ՕՎՍԵԹ տեսակի թուղթ՝ 12,500,000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Տիգրան Մեծ» ՓԲԸ-ի կողմից (ՀՎՀՀ 23-02505322, ՀՀ, Ք. Երևան, Արշակունյաց 2)՝ պայմանագիր կնքված 29.11.2014թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 29 նոյեմբեր 2014թ. – 29 դեկտեմբեր 2015թ.:
10	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Եջմիածնի համար Ինդոնեզական կամ Կորեական ՕՎՍԵԹ տեսակի թղթի մատակարարում՝ 12,500,000 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Եջմիածնի քաղաքապետարանի հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Եջմիածնի ֆինանսական բաժնի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1329 - Ա
քաղ. երևան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԱՎՏՈՊԱՐԿԻ ԹԱՐՄԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 15-ի N 07/80-2/23127-14 և դեկտեմբերի 11-ի N 06/3-3/22902-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 15-ի N 01/9953-14 եզրակացությունները, որոնցում է.

1. Բարեգործական որակելի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 6,100,000 դրամ արժողությամբ «Ավտոպարկի թարմացում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝


«Մուրան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00084235) 2014 թվականի հոկտեմբերի 8-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ավտոմեքենայի ձեռքբերում՝ (Nissan Sunny Base AT մակնիշի, արժաթագույն) 6,100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

Վարչատնտեսական բաժնի

Մուշեղ եպիսկոպոս Բաղդասար

« 05 »

15/3 2014 թ.

Ավտոպարկի թարմացում

Ծ Ր Ա Ձ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ավտոտնտեսության աշխատանքային որակը բարելավելու համար ձեռք բերել Nissan Sunny Base AT մակնիշի ավտոմեքենա:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3.	Բարեգործող (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4.	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ սոցիալական:
6.	Ծրագրի բյուջեն	6,100,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հոգևորականները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	08 հոկտեմբեր 2014թ. – 25 դեկտեմբեր 2014թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ավտոտնտեսության աշխատանքային որակը բարելավելու համար ձեռք բերել Nissan Sunny Base AT մակնիշի ավտոմեքենա՝ 6,100,000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Մուրան» ՍՊԸ-ի կողմից (ՀՎՀՀ 00084235, ՀՀ, ք. Երևան, Ն. Տիգրանյան 1, 1-ն փակուղի)՝ պայմանագիր կնքված 08.10.2014թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 08 հոկտեմբեր 2014թ. – 25 դեկտեմբեր 2014թ.:
10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ավտոտնտեսության աշխատանքային որակը բարելավելու համար Nissan Sunny Base AT մակնիշի ավտոմեքենայի ձեռք բերումը՝ 6,100,000 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ֆինանսական բաժնի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1330 - Ա
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԻ ԷՋՄԻԱՇՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՐԱՔԻՐԻ
ՀԱՅՈՐԴԱՑ ՏԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N 07/80-2/23077-14 և դեկտեմբերի 11-ի N 06/3-3/22898-14 Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 15-ի N 02/9957-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 4,117,210 դրամ արժողությամբ «Արաքլիրի Հայորդաց տան պայմանների բարելավում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«Գամմա էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. երևան, Բաբայան 36, բն. 3, ՀՎՀՀ՝ 00098479) 2014 թվականի նոյեմբերի 17-ին կնքված N 12Ծ/014 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է իր ուժերով, միջոցներով ու նյութերով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արաքլիրի Հայորդաց տան ընդհանուր 34.0 կվտ հզորությամբ հակասառցեցման համակարգերի իրականացման աշխատանքներ՝ 4,117,210 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:


3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին»


Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



Արաբկիրի Հայորդյաց տան պայմանների բարելավում
ԾՐԱԳԻՐ

15/2

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արաբկիրի Հայորդյաց տանը տեղադրել հակասառեցման համակարգեր:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4.	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ եկեղեցաշինություն:
6.	Ծրագրի բյուջեն	4,117,210 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հոգևորականները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	17 նոյեմբեր 2014թ. – 30 փետրվար 2015թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արաբկիրի Հայորդյաց տան հակասառեցման համակարգերի տեղադրումը՝ 4,117,210 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Գամմա Էլեկտրիկա» ՍՊԸ-ի կողմից (ՀՎՀՀ 00098479 , ՀՀ. Բ. Երևան, Բաքայան 36 բն. 3)՝ պայմանագիր կնքված 17.11.2014թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 17 նոյեմբեր 2014թ. – 30 փետրվար 2015թ.:
10.	Չեղք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Երեմյան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արաբկիրի Հայորդյաց տան հակասառեցման համակարգերի տեղադրումը՝ 4,117,210 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հայտարարագրաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1331 - Ա
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱԶՈՒՍՈՒՐԻ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 24-ի N 07/80-2/24637-14 և դեկտեմբերի 23-ի N 06/3-3/24489-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 02/1/10424-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 4,406,082 դրամ արժողությամբ «Եպիսկոպոսական ժողովի կազմակերպում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝


«Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00030747) 2014 թվականի նոյեմբերի 11-ին կնքված՝ ծառայությունների մատուցման պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կոնֆերանսի կազմակերպում՝ 4,406,082 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:



Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՄԱՅՐ ԱՅԹՈՒ ՄՈՒՐԲ ԷԶՄԻՍԻՆԻ

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐԱՅԱՆԻ ԿՈՂՈՒՑ

« 17 »

թվական

2014թ.

Եպիսկոպոսական ժողովի կազմակերպում

Ծ Ր Ա Գ Ի Ր

մ. 15/4

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կազմակերպել եպիսկոպոսական ժողովը, ապահովելով ժողովականների տեղափոխման, գրեմական պիտույքների, ընմիջումների և այլ հարցեր:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3	Բարեգործը (բարեգործները)	Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն
4	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածք, բնագավառը՝ հոգևոր:
6	Ծրագրի բյուջեն	4,406,082 ՀՀ դրամ
7	Բարեգործություն ստացողը	2014թ. եպիսկոպոսական ժողովի մասնակիցները
8	Ծրագրի իրականացման տևողությունը	11 նոյեմբեր 2014թ. – 01 փետրվար 2015թ.:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում Մայր Աթոռի տարածքում նոյեմբերի 11-13-ը կազմակերպել եպիսկոպոսական ժողով և հոգալ կազմակերպական այլ հարցեր՝ ընդհանուր 4,406,082 ՀՀ դրամ գումարով, առանց ԱԱՀ: Աշխատանքներն իրականացնում է «Արմենիա Թրավել+Ս» ՍՊԸ (ՀՎՀՀ 00030747), ք. Երևան, Վարդանանց 4, պայմանագիր կնքված 11.11.2014թ.: Ծրագիրը նախատեսված է իրականացնել 11 նոյեմբեր 2014թ. – 01 փետրվար 2015թ.:
10	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եպիսկոպոսական ժողովի կազմակերպչական աշխատանքները՝ 4,406,082 ՀՀ դրամ գումարով, առանց ԱԱՀ:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Չի նախատեսվում
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վարչատնտեսական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման համեմատողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1332 - Ա
քաղ. երևան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՇՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐԻ ՊԱՏՐԱՏՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 24-ի N 07/80-2/24655-14 և դեկտեմբերի 23-ի N 06/3-3/24485-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 26-ի N 02/14/10492-14 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 10,000,000 դրամ արժողությամբ «Լուսատուների պատրաստում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նիկոլ Դուման» ԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02208258) 2014 թվականի դեկտեմբերի 9-ին կնքված N 30Ա/014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լուսատուների պատրաստում՝ 10,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-

ման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

Վարչատնտեսական բաժնի տնօրեն

Մուշեղ Եղիսկոպոս Բաբայան

« 17 »

շեկարհեր

2014 թ.

Լուսատուների պատրաստում

Ծ Ր Ա Պ Ի Ր

ճ. 15/1

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքի համար պատրաստել նոր լուսատուներ:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406:
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ եկեղեցաշինություն:
6	Ծրագրի բյուջեն	10,000,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:
7	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալները:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	20 դեկտեմբեր 2014թ. – 01 ապրիլ 2015թ.:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար պատրաստել լուսատուներ՝ 10,000,000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Նիկոլ Դուման» ԱԿ-ի կողմից (ՀՎՀՀ 022208258, ՀՀ, Բ. Երևան, Արցախի 23/1)՝ պայմանագիր կնքված 09.12.2014թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 20 դեկտեմբեր 2014թ. – 01 ապրիլ 2015թ.:
10	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքի համար լուսատուների պատրաստում՝ 10,000,000 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ֆինանսական, ճարտարապետաշինարարական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1333 -Ա
(Որոշումն ընդունվել է 2014 թվականի դեկտեմբերի 26-ի նիստին)
քաղ. երևան**

**«ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի N 07/80-2/21769-14 և դեկտեմբերի 1-ի N 06/3-3/21703-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 2-ի N 02/9443-14, Հայաստանի Հանրապետության աշխարհաբանի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի N ՖԲ/ԱՆՄ-4/9666-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի N 01/07-1/14672-14 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2014 թվականի նոյեմբերի 28-ի N 101/104.3.2/5796-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 223,779,000 դրամ արժեքով ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամի կողմից (ՀՀ, ք. Տաշիր, Գրիբոյեդովի 50ա, ՀՎՀՀ՝ 07204063) կնքված ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Դեբեդ» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2011 թվականի հունիսի 15-ին կնքված N 000611 պայմանագրում (2013 թվականի հուլիսի 7-ին կնքված համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 1,650,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայֆուազգարդ» ՓԲԸ-ի Լոռու ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2011 թվականի մայիսի 14-ին կնքված N04505118881 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը գազի մատակարարում՝ 4,140,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայքըմուլոյուղի» ՓԲԸ-ի «Հյուսիս-արևմտյան» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2012 թվականի հունվարի 12-ին կնքված N 234884736 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի

դեկտեմբերի 31-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 660,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏեյ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2014 թվականի հոկտեմբերի 2-ին կնքված՝ N 114720142 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը հեռախոսակապի և ինտերնետային ծառայությունների մատուցում՝ 1,650,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Էլ Ի Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2014 թվականի հուլիսի 3-ին կնքված N 2-46 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկում՝ 300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամին՝


1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
 «Տիրամայր Հայաստանի Դաստիարակության Կենտրոն» հիմնադրամի
 Մեծավորուհի Զարուհի (քույր Հակիմբա)
 Մուրադյանի կողմից

 « 24 » Նոյեմբեր 2014թ .

« ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
 ԾՐԱԳԻՐ 15/8

1	Ծրագրի նպատակը	«Տիրամայր Հայաստանի Դաստիարակության Կենտրոն» հիմնադրամ-ում անվճար պահում և դաստիարակում ենք Տաշիր քաղաքի 6-18 տարեկան միակողմանի և երկկողմանի որբ մոտ 30-35 երեխաների ու պատանիների անկախ նրանց կրոնական պատկանելիությունից: Երեխաները հաճախում են պետական դպրոցներ, ապա վերադառնում են կրթահամալիր: Ինչպես նաև աջակցություն աղքատության մեջ գտնվող սոցիալապես անապահով ընտանիքներին, միայնակ և կարիքավոր ծերերին, զոհված ազատամարտիկների երեխաներին: • Սոցիալական ծառայություններ: • Հոգեբանական ծառայություններ, հոգեբանական աջակցության կազմակերպում, անհատական և խմբային թերապիաներ: • Բժշկական ծառայություններ՝ ակնաբուժի, ատամնաբուժի՝ բժշկական վերահսկողություն: • Կրթական ծառայություններ՝ կենտրոնի երեխաների համար անվճար դասընթացների կազմակերպում՝ հայ եկեղեցու պատմության, կրոնի, մաթեմատիկայի, հայոց լեզվի, ռուսաց լեզվի, անգլերենի, ֆրանսերենի, համակարգչի, երգ երաժշտության, պարի և ասեղնագործության: • 6-18 տարեկան երեխաների ու պատանիների ամառային հանգստի կազմակերպում ամառային բակային ճամբարում: • Պատմամշակութային արժեքների հետ շփում, ամիսը մեկ անգամ սպորտային և մշակութային ծրագրերի կազմակերպում: • Քանի որ «Տիրամայր Հայաստանի Դաստիարակության Կենտրոն» հիմնադրամ-ը չունի հանդիսությունների համար դահլիճ, անհրաժեշտություն կա կենտրոնի տարածքում դահլիճի կառուցման, որպեսզի կարողանանք նշել եկեղեցական, հոգևոր և ազգային տոները, անցկացնել միջոցառումներ՝ համերգներ, թատերական ներկայացումներ, ինտելեկտուալ մրցումներ, ժողովներ, ինչպես նաև ամառային բակային ճամբարի 200-300 երեխաների համախմբման և զանազան խաղերի անցկացման համար, ինչպես նաև կենտրոնի շենքի երկու հարկերը և նկուղային հարկը որբ
---	----------------	--

		ծառայում որպես պահեստ, ենթակա են վերանորոգման, քանի որ խիստ տուժել են խոնավությունից, շենքի մուտքի-ասֆալտապատում, երեխաների համար խաղահրապարակ իր անհրաժեշտ կառույցներով (ճոճանակ, սղարան և այլն), պարտեզի բարեկարգում, կենցաղային հարմարությունների բարելավում: 15/8
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հարկային և մաքսային արտոնություններից:
3	Բարեգործը	Ծրագիրը ֆինանսավորում է. 1. « Ֆոնդասիոն Ալիանս Արմենի» Ֆրանսիա բարեգործական հիմնադրամի կողմից, որից ակնկալում ենք տարեկան 13 միլիոն 750 հազար դրամ, երեք տարվա համար 41 միլիոն 250 հազար դրամի օգնություն: 2. «Կիրիս-Ին-Նատ» Գերմանիա բարեգործական հիմնադրամի կողմից, որից ակնկալում ենք տարեկան 12 միլիոն 875 հազար դրամ, երեք տարվա համար 38 միլիոն 625 հազար դրամի օգնություն: 3. « Օ վրը-Օ րիա ն» Ֆրանսիա բարեգործական հիմնադրամի կողմից, որից ակնկալում ենք տարեկան 12 միլիոն 875 հազար դրամ, երեք տարվա համար 38 միլիոն 625 հազար դրամի օգնություն: 4. «ԱՄՆ-ի և Կանադայի Կաթոլիկե Առաջնորդարան»-ի կողմից ակնկալում ենք 10 միլիոն 250 հազար դրամ տարեկան, երեք տարվա համար 30 միլիոն 750 հազար դրամի օգնություն: 5. « ԱՄՆ-ից Վահե Դումպալաբյան»-ի կողմից ակնկալում ենք տարեկան 10 միլիոն 250 հազար դրամ, երեք տարվա համար՝ 30 միլիոն 750 հազար դրամի օգնություն: 6. «Ռենովաբիս» Գ Էրմանիա բարեգործական կազմակերպության կողմից, ակնկալում ենք տարեկան 10 միլիոն 300 հազար դրամ, երեք տարվա համար, 30 միլիոն 900 հազար դրամի օգնություն: 7. Ֆրանսիա-ից « Գ որիզյա և եղբա յոներ» -ի կողմից ակնկալում ենք տարեկան 4 միլիոն 293 հազար դրամ, երեք տարվա համար 12 միլիոն 879 հազար դրամի օգնություն:


		Այսպիսով տարեկան ընդամենը 74 միլիոն 593 հազար դրամ, իսկ երեք տարվա համար՝ 223 միլիոն 779 հազար դրամի ֆինանսական օգնություն:
4	Ծրագիրը կատարողը	Ծրագիրն անմիջականորեն իրականացնող է հանդիսանում «Տիրամայր Հայաստանի Դատիարարության Կենտրոն» հիմնադրամը (<i>hasugh' Sawzhir, Gephoyetevm' y 50 a ; 5455 07204063</i>):
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագրի իրականացման վայր է 22 Լոռու մարզի Տաշիր քաղաքը: Ծրագրի ուղղվածությունը կրթական, սոցիալական և առողջապահական է:
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի արժեքն է 1 տարվա կտրվածքով՝ 74 միլիոն 593 հազար դրամ, երեք տարվա՝ 2015-2017թթ. համար 223 միլիոն 779 հազար դրամ:
7	Բարեգործություն ստացողը	Ծրագրում ընդգրկված են 6-18 տարեկան մոտ 30-35 երեխաներ ու պատանիներ, ովքեր ապրում են սոցիալական ծայրահեղ դժվարություններ ունեցող ընտանիքներում, կամ միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ են: Բնչպես նաև ծրագրի շահառուներ են Տաշիրի շրջանի, անապահով ընտանիքները, միայնակ և կարիքավոր ծերերը, զոհված ազատամարտիկների երեխաները, որոնց ցուցակները կազմվել են տեղական ինքնակառավարման մարմինների հետ միասին՝ ընտանիքների սոցիալական նկարագիրների մանրամասն ուսումնասիրությունների հիման վրա: Ընդհանուր առմամբ, ծրագրի շահառուներն են հանդիսանում 634 -ից ընտանիք:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը շարունակական է և իրականացվում է 2011-թվականից սկսած, այժմ որակավորման է ներկայացվում 01 հունվարի 2015թ. - 31 դեկտեմբեր 2017 թ. իրականացվելիք ծրագիրը:
9	Սյուրսառույթների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	• Մոլիլական ծառայությունը իրականացվում է քույրերի կողմից (այցելություններ անապահով ընտանիքների)՝ ամբողջ ծրագրի ընթացքում • Հոգեբանական ծառայություններ, հոգեբանական աջակցության կազմակերպումը իրականացվում է քույրերի կողմից - ամբողջ ծրագրի ընթացքում • Բժշկական ծառայություններ՝ ակնաբուժական ստուգումները իրականացվում է Երևանում, ատամնաբուժական բժշկական վերահսկողությունը իրականացվում է Տաշիրի մանկական պոլիկլինիկայում, Աշոցքի «Տիրամայր Նարեկի» հիվանդա-

	նոցում պարբերաբար իրականացվում է բուժզննում - ամբողջ ծրագրի ընթացքում 15/8 • Կենտրոն հաճախող երեխաների վիտամիններով և հանքային նյութերով հարուստ տաք սննդի մատուցում օրը 1 անգամ: Մեկ երեխայի սննդի օրական արժեքը կազմում է 600 դրամ: Տարեկան ծախսը կազմում է 5 միլիոն 166 հազար դրամ, 3 տարվա համար 15 միլիոն 498 հազար դրամ՝ 01 հունվարի 2015թ. - 31 դեկտեմբեր 2017թ. • Դպրոցահասակ երեխաների դպրոցական տնային պարապմունքների կազմակերպում դպրոցից հետո: Երեխաներին գրենական պիտույքների, ուսումնական նյութերի, պայուսակների ապահովում: Մեկ երեխայի հաշվով գրենական պիտույքների արժեքը տնական կազմում է մոտ 2500-3000 դրամ: Տարեկան գրենական պիտույքների ծախսը կազմում է 960 հազար դրամ, 3 տարվա համար 2 միլիոն 880 հազար դրամ՝ 01 հունվարի 2015թ. - 31 դեկտեմբեր 2017թ. • Երեխաների բնականոն կենցաղի ապահովման համար անհրաժեշտ տնտեսական պարագաներ, տարեկան մոտ 850 հազար դրամ, 3 տարվա համար 2 միլիոն 550 հազար դրամ՝ 01 հունվարի 2015թ. - 31 դեկտեմբեր 2017թ. • Դեղորայք՝ տարեկան 350 հազար դրամ, 3 տարվա համար 1 միլիոն 50 հազար դրամ՝ 01 հունվարի 2015թ. - 31 դեկտեմբեր 2017թ. • Պատմամշակութային արժեքների հետ շփում, ամիսը մեկ անգամ, սպորտային և մշակութային ծրագրերի կազմակերպում՝ տարեկան 1 միլիոն 250 հազար դրամ, 3 տարվա համար 3 միլիոն 750 հազար դրամ՝ 01 հունվարի 2015թ. - 31 դեկտեմբեր 2017թ. • «Տիրամայր Հայաստանի Դատիարարության Կենտրոն» հիմնադրամի շենքի շահագործման և կոմունալ - կենցաղային ծախսերը՝ տարեկան 3 միլիոն դրամ, 3 տարվա համար 9 միլիոն դրամ՝ 01 հունվարի 2015թ. - 31 դեկտեմբեր 2017թ., այդ թվում՝ Էլեկտրականության համար 550 հազար դրամ, 3 տարվա համար 1 միլիոն 650 դրամ: Ջրամատակարարման և ջրահեռացման համար տարեկան 220 հազար դրամ 3 տարվա համար 660 հազար դրամ: Գազի համար տարեկան մոտ 1 միլիոն 380 հազար դրամ 3 տարվա համար 4 միլիոն 140 հազար դրամ:
--	--

		Ներտնային ծառայության համար տարեկան 100 հազար դրամ 3 տարվա համար 300 հազար դրամ: Հեռախոսակապի , ինտերնետի և բջջային կապի համար տարեկան մոտ 550 հազար դրամ 3 տարվա համար 1 միլիոն 650 հազար դրամ: • Գույքի ձեռք բերման ծախսեր տարեկան 2 միլիոն 737 հազար 70 դրամ՝ երեք տարվա համար՝ 8 միլիոն 211 հազար 210 դրամ՝ 01 հունվարի 2015թ. - 31 դեկտեմբեր 2017թ. • Շինարարական, վերանորոգման և բարեկարգման համար՝ տարեկան 59 միլիոն 534 հազար դրամ, երեք տարվա համար 178 միլիոն 602 հազար դրամ՝ 01 հունվարի 2015թ. - 31 դեկտեմբեր 2017 թ., Որից՝ Շինարարական աշխատանքներ՝ տարեկան 18 միլիոն դրամ, երեք տարվա համար՝ 54 միլիոն դրամ, այդ թվում՝ դահլիճ 54 միլիոն դրամ՝ ծրագրի իրականացման ընթացքում, կախված ֆինանսավորումից Վերանորոգում շենքի առաջին, երկրորդ հարկերի և նկուղային հարկի տարեկան 17 միլիոն դրամ, երեք տարվա համար 51 միլիոն դրամ՝ ծրագրի իրականացման ընթացքում, կախված ֆինանսավորումից Տարածքի բարեկարգում՝ տարեկան 24 միլիոն 534 հազար դրամ, երեք տարվա համար՝ 73 միլիոն 602 հազար դրամ՝ 01 հունվարի 2015թ. - 31 դեկտեմբեր 2017 թ. • Կազմակերպչական ծախսերը՝ տարեկան կազմում են 745 հազար 930 դրամ, երեք տարվա համար՝ 2 միլիոն 237 հազար 790 դրամ
Ձեռք բերվող		• Այս ծրագրի շրջանակներում Տաշիրի դաստիարակության կենտրոնում ծախսվում է տարեկան 74 միլիոն 593 հազար դրամ, երեք տարվա համար 223 միլիոն 779 հազար դրամ, 01 հունվարի 2015թ.-31 դեկտեմբեր 2017 թ: Որից՝ - Կոմունալ –կենցաղային ծախսեր՝տարեկան, 3 միլիոն դրամ, երեք տարվա համար՝ 9 միլիոն դրամ, այդ թվում, - Էլեկտրականության համար տարեկան 550 հազար դրամ, 3 տարվա համար 1միլիոն 650 դրամ:

10	(ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	- Ջրամատակարարման և ջրահեռացման համար տարեկան 220 հազար դրամ, 3 տարվա համար 660 հազար դրամ: - Գազի համար տարեկան 1միլիոն 380 հազար դրամ, երեք տարվա հազար 4 միլիոն 140 հազար դրամ: - Ներտնային ծառայության համար տարեկան 100 հազար դրամ 3 տարվա համար 300 հազար դրամ: - Հեռախոսակապի , ինտերնետի համար տարեկան 550 հազար դրամ, երեք տարվա համար՝ 1 միլիոն 650 հազար դրամ: - Մնեղի համար տարեկան 5 միլիոն 166 հազար դրամ, երեք տարվա համար 15 միլիոն 498 հազար դրամ: - Տնտեսական ապրանքների համար տարեկան 850 հազար դրամ, (մնացած անհրաժեշտ տնտեսական ապրանքները ուղարկում են բարերարները) երեք տարեկան տարվա համար՝ 2 միլիոն 550 հազար դրամ: - Գրենական պիտույքների համար տարեկան 960 հազար դրամ, (մնացած անհրաժեշտ գրենական պիտույքները ուղարկում են բարերարները) երեք տարվա համար՝ 2 միլիոն 880 հազար դրամ: - Դեղորայք ձեռքբերման ծախսեր՝տարեկան 350 հազար դրամ, երեք տարվա համար՝ 1 միլիոն 50 հազար դրամ: - Պատմամշակութային արժեքների հետ շփում (շրջագայություններ) տարեկան 1 միլիոն 250 հազար դրամ, երեք տարվա համար 3 միլիոն 750 հազար դրամ: - Գույքի ձեռք բերման ծախսեր տարեկան 2 միլիոն 737 հազար 70 դրամ, երեք տարվա համար 8 միլիոն 211 հազար 210 դրամ: - Շինարարական,վերանորոգման և Բարոկարգման համար տարեկան 59 միլիոն 534 հազար դրամ, երեք տարվա համար 178 միլիոն 602 հազար դրամ Որից՝ - Շինարարական աշխատանքներ՝ տարեկան 18 միլիոն դրամ, երեք տարվա համար՝ 54 միլիոն դրամ, այդ թվում՝ դահլիճ 54 միլիոն դրամ: - Վերանորոգում շենքի առաջին, երկրորդ հարկերի և նկուղային հարկի, տարեկան 17 միլիոն դրամ, երեք տարվա համար
----	---	---

		51 միլիոն դրամ: 01 հունվարի 2015թ.-31 դեկտեմբեր 2017 թ: - Բարեկարգում տարածքի տարեկան 24 միլիոն 534 հազար դրամ, երեք տարվա համար՝ 73 միլիոն 602 հազար դրամ. - Կազմակերպչական ծախսերը՝ տարեկան կազմում են 745 հազար 930 դրամ, երեք տարին 2 միլիոն 237 հազար 790 դրամ:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Ծրագիրը նախատեսում է կազմակերպչական ծախսեր, տարեկան 745 հազար 930 դրամ, երեք տարվա համար 2 միլիոն 237 հազար 790 դրամ, որը նախատեսված է քույրերի և կանաչությունների անձնական կարիքների համար և կազմում է ծրագրի բյուջեյի մեկ %-ը.
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում »Տիրաւայր Հայաստանի Դատախարարության Կենտրոն« հիմնադրամը համագործակցելու և տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ շահառուների ցուցակների ճշտման, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի. ՀՀ առողջապահության, ՀՀ կրթության և գիտության նախարարությունների և ՀՀ Լոռու մարզպետարանի և տեղական կառավարման մարմինների հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հիմնական վերահսկողությունն իրականացվում է ֆինանսավորող բարերարների կողմից: Այդ նպատակով նրանք պետք է ներգրավեն ներքին խորհրդատուների, տեղական և միջազգային ակտիվիստների: Մահմանված կարգով ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կներկայացվի տեղեկատվություն իրականացվող ծրագրերի վերաբերյալ:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1334 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N Մ-522-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 07/80-2/24834-14 և դեկտեմբերի 23-ի N 06/3-3/24505-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 6-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Աջակցություն սիրիահայերին և նրանց կարողությունների հզորացում» ծրագրի մասին» N Մ-522-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բենեֆիկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00082634) 2014 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված առքուվաճառքի պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ծրագրի շահառուներին 108 հատ նվեր-քարտերի տրամադրում՝ 10,080,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Վ.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1335 - Ա
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱԶՈՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՄՈՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՆՔԻ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՂԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 19-ի N 07/80-2/24644-14 և դեկտեմբերի 25-ի N 06/3-3/24777-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 24-ի N 02/14/10420-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 179,584,670 դրամ արժողությամբ «Մոմավարության շենքի շինարարության նախապատրաստական աշխատանքների իրականացում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հորիզոն-95» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00801721) 2014 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված՝ N 14Ծ/014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մոմավարության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մատուցելի և դամբարանի շինարարության նախապատրաստական, ինչպես նաև պեղումների, հողային և ջրամեկուսացման աշխատանքների իրականացում՝ 179,584,670 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:


3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործա-

կան ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:



ՆԱԽԱԳԱՀ

Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Սուշեղ Եսիսկոյան Բաղդասար

« 17 » 2014 թ.

Սոմավառության շենքի շինարարության նախապատրաստական աշխատանքներ
Ծ Ր Ա Գ Ի Ր

20.15/3

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է նախապատրաստական աշխատանքներ իրականացնել նախքան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սոմավառության շենքի շինարարությունը սկսելը:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4.	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ եկեղեցաշինություն:
6.	Ծրագրի բյուջեն	179,584,670 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	25 դեկտեմբեր 2014թ. – 25 դեկտեմբեր 2015թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սոմավառության շենքի շինարարության համար կատարել նախապատրաստական աշխատանքներ՝ 179,584,670 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Հորիզոն-95» ՍՊԸ-ի կողմից (ՀՎՀՀ 00801721, ՀՀ, Բ. Երևան, Ամիրյան 26 փ.)՝ պայմանագիր կնքված 10.12.2014թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 25 դեկտեմբեր 2014թ. – 25 դեկտեմբեր 2015թ.:
10.	Չեղք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սոմավառության շենքի շինարարության նախապատրաստական աշխատանքները 179,584,670 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն էջմիածնի քաղաքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ֆինանսական, ճարտարապետաշինարարական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1336 - Ա
քաղ. երևան

ՄԱՅՐ ԱԶՈՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐԴՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 24-ի N 07/80-2/24652-14 և դեկտեմբերի 23-ի N 06/3-3/24484-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 02/14/10423-14 եզրակացությունները, որոշում է:

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 6,580,000 դրամ արժողությամբ «Լուսատուների վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նիկոլ Դուման» ԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02208258) 2014 թվականի դեկտեմբերի 9-ին կնքված N 33Ա/014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է թվով 47 լուսատուների վերանորոգում՝ 6,580,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Վարչատնտեսական բաժնի տնօրեն

Սուշել Եսիսկոպոս Բաբայան

« 17 » դեկտեմբեր 2014 թ.

Լուսատուների վերանորոգություն

Ծ Ր Ա Պ Ի Ր

մ. 15/2

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքի լուսատուների վերանորոգություն իրականացումը:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406:
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ Եկեղեցաշինություն:
6	Ծրագրի բյուջեն	6,580,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:
7	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալները:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	20 դեկտեմբեր 2014թ. – 01 ապրիլ 2015թ.:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքի լուսատուների վերանորոգությունը՝ 6,580,000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Նիկոլ Դուման» ԱԿ-ի կողմից (ՀՎՀՀ 022208258, ՀՀ, Բ. Երևան, Արցախի 23/1)՝ պայմանագիր կնքված 09.12.2014թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 20 դեկտեմբեր 2014թ. – 01 ապրիլ 2015թ.:
10	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքի լուսատուների վերանորոգությունը՝ 6,580,000 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ֆինանսական, ճարտարապետաշինարարական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ - 1337- Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 24-ի N 07/80-2/24653-14 և
N 06/3-3/24238-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի
մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով
նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008
թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի
մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա
որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա, 2011 թվականի մայիսի 13-ի N Մ-346-Ա
և 2014 թվականի հուլիսի 9-ի N Մ-654-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված
ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վազեն Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00105041) 2014 թվականի դեկտեմբերի 9-ին
կնքված՝ N 096/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է
գազաֆիկացման աշխատանքների կատարում՝ 1,060,000 դրամի չափով, առանց ավելաց-
ված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ-1338-Ա

**«ՕՐՐԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N 07/80-2/23978-14 և դեկտեմբերի 16-ի N 06/3-3/23275-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 17-ի N 02/14/10073-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 16-ի N ՖԲ/ԱՆՄ-4/10305-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 15-ի N ԱՄ/22.2/13374-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N 03/07-1/15263-14, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության 2014 թվականի դեկտեմբերի 22-ի N 24/3161 և Երևանի քաղաքապետարանի 2014 թվականի դեկտեմբերի 19-ի N 02/34-70900 հ եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, առաջին Եկմայան 6, ՀՎՀՀ՝ 02552842) 2015 թվականին իրականացվող՝ 113,917,500 դրամ ընդհանուր արժեքով, «Օրրան» օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի «Կենտրոն» տեղամասի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2004 թվականի հունիսի 17-ին կնքված՝ N 010309530 51/3162/4682 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 1,600,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2006 թվականի հուլիսի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի

1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարում՝ 150,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Հարավ» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի օգոստոսի 14-ին կնքված՝ N 263135 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 1,700,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի ապրիլի 7-ին կնքված՝ N 012.08.13. 0546 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կենտրոնի գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 3,200,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.


5) «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2014 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված՝ N Ե-234 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կենտրոնի գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման և կարգաբերման աշխատանքների իրականացում՝ 69,718 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Գրանթ Թորնթոն» ՊԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00040569) 2013 թվականի ապրիլի 29-ին կնքված՝ N AT-AU-024-13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի ֆինանսական տարվա աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «ՍԱՍ Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02538542) 2014 թվականի հուլիսի 10-ին կնքված՝ N AR 100714/22 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում մթերքի մատակարարում՝ 20,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Վալենտինա» ՀԶ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00835704) 2014 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված՝ N 1-12/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երեխաների այցելություն ջրաշխարհ՝ 540,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2010 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված՝ N 74556 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 1,200,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.



10) «Դարոյնք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01220854) 2011 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված՝ N 16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված ապրանքների մատակարարում՝ 1,206,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

11) «Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2014 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված՝ N 116/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում բենզինի գնում՝ 2,700,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Օրբան» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ՝ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի, սպորտի և հմտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առկա Հայաստանի Հանրապետության ոստիկանություն և երևանի քաղաքապետարան:



Ս. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ

«Օրբան» բարեգործական հասարակական կազմակերպության տնօրեն Նիմենուհի Հովհաննիսյան

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻ

«ՕՐՈՐԱՆ» օգնություն կադրավոր ընտանիքներին

2015 թ.

1	Ծրագրի նպատակները	Օգնել ֆինանսական դժվար կացության մեջ հայտնված ընտանիքների երեխաներին և ծնիքին, նրանց շրջանում վերացնել մուրացվածությունը, աջակցել արթնացման մեջ գտնվող ընտանիքներին, միայնակ ու կարիքավոր ծնեղին
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ հարկերի, տուրքերի, պարտավոր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելով:
3	Բարեգործը (բարեգործները)	ԱՄՆ-ում «Օրբան» բարեգործական հասարակական կազմակերպություն, Հոլիանդիայում ընտանիք, Գրիգորյան բարեգործական հիմնադրամ /Անգլիա/, OSI AF Armenia, Յիբիլյան ընտանիք, Հակոբ Բարսեղյան
4	Ծրագրի կատարողը	«Օրբան» բարեգործական հասարակական կազմակերպություն ՀՎՀՀ 02552842 Առաջին Եվմայան 6 Երևան, Հայաստանի Հանրապետություն Հեռ.՝ 53-51-67
5	Ծրագրի իրականացման կայքը (կայքերը), բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Երևան
6	Ծրագրի բյուջեն	Սոցիալական բնագավառ Ծրագրի բյուջեն 113,917,500 (հարյուր տասներեք միլիոն ինը հարյուր տասնութ հազար հինգ հարյուր քանգյաթ) ՀՀ դրամ
7	Բարեգործություն ստացողը	Ծրագիրը սկսել է գործել 2000թ. ապրիլի 19-ից. 16 երեխաներով և 27 ծնեղով: Կլծն ծրագրում ներգրավված են. 6-16 տարեկան 105 երեխա, ովքեր ապրում են սոցիալական ծայրահեղ դժկարություններ ունեցող, մուրացվածության շեմին գտնվող ընտանիքներում: Մի շարք երեխաներ աշխատում և մուրում են փողոցում: Երեխաների մեծ մասը միակողմանի ծնողազուրկ են, հաշմանդամ, բաժանված կամ ազատազրկված ծնողներ ունեն: 50 թոշակառուներ՝ 60 և ավելի բարձր տարիքի կանայք ու տղաներով, ովքեր անտուն են և մուրում են փողոցում, միայնակ են, անուսմացած են և անժառանգ, և, II, III խմբերի հաշմանդամ են, ունեն ժառանգներ, ասկայն լրացուցիչ աջակցության խիստ կարիք ունեն:

15/6

		Շահառուների ընտրությունը կատարում է սոցիալական աշխատողը՝ նախապես մշակված չափանիշներով: Յուրաքանչյուր դեպք քննարկվում է Օրրանի մասնագիտական խմբում, որի մեջ մտնում են Օրրանի սոցիալական աշխատողը, մանկավարժները, հոգեբանը, բժիշկը եւ գործադիր տնօրենը: Շահառուների ընտրության հարցում Օրրանը համագործակցում է «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն», Երևանի տարբեր վարչական շրջաններ սոցիալական բաժինների, սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաեւ «ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժնի» հետ:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը սկսվել է 2000թ. ապրիլին և այն շարունակական է: Սույն ծրագիրը նախատեսված է 2015թ. հունվարի 1-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար: Այն կգործի այնքան ժամանակ, որքան կազմակերպությունը հնարավորություն կունենա իրագործել իր առաքելությունը և այդ նպատակով կունենա ֆինանսական միջոցներ:
9	Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Օրրան ԲՀ-ում Առաջին Եվմայան 6 հասցեում գտնվող իր եռահարկ կենտրոնում մուրացիկ, թափառաշրջիկ եւ ծայրահեղ կարիքավոր ընտանիքների 105 երեխայի շաբաթը 6 օր մատուցում է տաք ճաշ եւ իրականացնում սոցիալական, կրթական, մշակութային, հոգեբանական եւ բժշկական ծառայություն: Շաբաթը 6 օր Օրրանը տաք նախաճաշ է մատուցում 50 միայնակ, կարիքավոր ծերերի եւ հաշմանդամների: • 105 երեխայի և 50 թոշակառուի ամենօրյա սնունդ- տարեկան կազմում է 38,694,555 դրամ • բժշկական և հոգեբանական ծառայություններ - տարեկան 4,283,263 դրամ • սոցիալական ծառայություն, հագուստ և կոշիկ - տարեկան 5,798,967 դրամ • մշակութային միջոցառումներ - տարեկան 11,797,775 դրամ • դպրոցահասակ երեխաների տնային պարապմունքների կազմակերպում դպրոցից հետո շաբաթական 6 օր 105 երեխայի համար, գրեմական պիտույքների, ուսումնական նյութերի, պայուսակների ապահովում, և ձեռարվեստական ինչպես կենտրոններում ուսուցում (Փայտամշակում, մակրամե, կավագործություն, նկարչություն, բացիկների պատրաստում)- տարեկան 18,530,939 դրամ • արտասահմանից բեռների ներմուծում (բարերարների ցանկությամբ ուղարկված հագուստ, գրեմական պիտույքներ, խաղալիք, ապրուստային ապրանք)– տարեկան 4,000,000 դրամ • նվիրատվություն. - ծայրաստիճան կարիքավոր 60 ընտանիքների էլեկտրաէներգիայի և 3 ընտանիքների բնակարանի վարձի վճարում- տարեկան 5,500,000 դրամ, - 90 երեխաների ամենօրյա երթևեկության ծախսեր- տարեկան 5,616,000 դրամ, - 8 սաների՝ ըստ նախասիրության (երաժշտություն, արհեստներ, շախմատ և այլ) բուժման

2

վարձերի վճարում - տարեկան 1,260,000 դրամ; Զնդամենը 95,481,500 դրամ (իննաունենից միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար հինգ հարյուր) Կազմակերպչական ծախսերը-18,436,000 դրամ, ընդամենը ծրագրի բյուջեն 113,917,500 դրամ :							
10	Զեռք բերվելիք (ներմուծվող) ապրանքներ, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	N	Ամսաթիվ	Պայմանագրի կամ հաշիվ ապրանքագրի համարը	Կազմակերպության կամ մատակարարի անվանումը	Նկարագրությունը	ՀՀ դրամ տարեկան առանց ԱԱՀ
		1	17.06.04	N010309530 51/3162/4682	«ԱրմենՏել» ՀՀ ՓԲԸ	Հեռախոս. կապի մատակարարում	1,600,000
		2	12.07.06	N 07-0012-6-1	Երևանի «Զրմուղ Կոյուղի»	Խմելու ջրի մատակարարում	150,000
		3	14.08.08	N-263135	“ Հայաստանի էլեկտրական ցանցեր” ՓԲԸ	էլեկտրա էներգիայի մատակարար	1,700,000
		4			ԱՀ «Խաչատուր Շահինյան»	Հացի գնում	3,000,000
		5	07.04.2013	Պայմանագիր N 012.08.13.0546, առ 07.04.2013	«Հայրուսգազարդ» ՓԲԸ	Գազի մատակարարում	3,200,000
		6				Արտասահմանից բեռների ներմուծում	4,000,000
		7	11.12.14	Ե-243	“Էյ-Ի-ՋԻ-Սերվիս” ՍՊԸ	Գազի սարքավորումների տեխնիկական սպասարկում	69,718
		8	29.04.2013	Առույտառական ծառայություններ ի մատուցման պայմանագիր N AT-AU-024-13	“Գրանթ Թորնթոն” ՓԲԸ	Տարեկան ֆինանսական աուդիտ	1,500,000
		9	10.07.14	Պայմանագրի AR 100714/22	“ՍԱՍ ԳՐՈՒՊ” ՍՊԸ	Մթերք	20,000,000

3

10	10.12.14	Պայմանագրի 1-12/14	“Վալենտինա” ՀՀ ՍՊԸ	Երեխաների այցելություն Ջրաշխարհի (90 եր*6000դր)	540,000
11			“Ռիպա” առողջարան ՍՊԸ	Երեխաների հանգիստ “Ռիպա” առողջարանում (70եր*7 օր*8000 դր)	3,360,000
12	16.12.10	74556	“Ղ-Տելեկոմ” ՓԲԸ	Հեռախոս. կապի մատակարարում	1,200,000
13	12.12.11	16	“Ղարոյնք” ՍՊԸ	Թխվածքաբլիթ, վաֆլի	1,206,000
14			«Կարանդաշ» ՍՊԸ	Դպրոցական գրենական պիթույք	2,854,000
15	10.12.14	116/14	“Ֆլեշ” ՍՊԸ	Բենզինի գնում	2,700,000
16			Արմենիա Հյուրանոցային Համալիր ՓԲԸ	միջոցառում դրամական միջոցների հայթայթման նպատակով	4,200,000
Ընդամենը					51,279,718


Ներմուծումներ՝ բարերարների կողմից ուղարկվող նվերներ, հիմնականում մանկական հագուստ եւ դպրոցական պիտույքներ:

11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր	Կենցաղային ծախսեր՝ պայմանագրեր «ՀայՌուսգազարդ»-ի, «ԱրմենՏել»-ի, “Ղ-Տելեկոմ” ՓԲԸ, «Հայաստանի էլեկտրական Ցանցեր», Երևանի «Ջրմուղ Կոյուղի» ընկերությունների հետ: • գազ-տարեկան՝ 3,200,000 դրամ • գազի սարքավորումների տեխնիկական սպասարկում- 01.01.14-31.12.14, - 70,000 դրամ • ջուր՝ 150,000 դրամ • էլեկտրաէներգիա՝ 1,700,000 դրամ • հեռախոս՝ 2,800,000 դրամ • գույքահարկ շենքի և մեքենայի համար 986,000 դրամ • գրասենյակային ծախսեր 800,000 դրամ • ֆինանսական աուդիտ «Գրանթ Թորնթոն Ամի» ՍՊԸ-ի կողմից 1,500,000 դրամ • փոստային ծախսեր 180,000 դրամ • բենզինի ծախսեր-2,700,000 դրամ • անվադողների ձեռքբերում – 150,000 դրամ • «Արմենիա» հյուրանոցային համալիր» ՓԲԸ միջոցառում դրամական միջոցների հայթայթման նպատակով-4,200,000 դրամ Ընդամենը 18,436,000 (տասնութ միլիոն չորս հարյուր երեսունվեց հազար) դրամ
----	---	---

15/6

Armen V. Stepanian

12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ	1. ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հասնաժողով 2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 3. ՀՀ առողջապահության նախարարություն 4. ՀՀ կրթության և գիտության նախարարություն 5. Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանների սոցիալական վարչություններ 6. Տեղական ու միջազգային ՀԿ-ներ, որոնք աշխատում են ռիսկի խմբի երեխաների հետ 7. ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների կողմից կատարվող համագործակցությունների դեմ պայքարի բաժին «Օրրանը» համագործակցում է նաև սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ՋԼՄ-ների հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	• Եռամսյակային և տարեկան հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողով • ամսեկան եւ եռամսյակային աշխատանքային ու ֆինանսական հաշվետվություններ են ներկայացվում «Օրրան» ԲՀԿ-ի տնօրենների խորհրդին • գույքագրումը և բաշխումն իրականացվում են «Օրրան» ԲՀԿ –ի գործադիր տնօրենի, հաշվապահի և սոցիալական աշխատողի, ինչպես նաև շահառուների ստորագրություններով ու անձնագրային տվյալներով • Եռամսյակային հաշվետվություններ ՀՀ կառավարության ամբողջական Պետական Եկամուտների Կոմիտե • ֆինանսական աուդիտն իրականացվում է «Գրանթ Թորնթոն Ամի» ՍՊԸ-ի կողմից



Ծրագրի ղեկավար

Armen V. Stepanian

Արմենուհի Հովաննիսյան

15/6



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
26 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- 1339-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում
տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և
